ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Մասնակից՝ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1352-2021 գրությամբ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 29.01.2021թ.-ի թիվ 04/04.2/297-2021 գրության հիման վրա, 03.02.2021թ.-ին «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 03.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 03.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/34 համարի ծածկագիրը:

10.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը 29.01.2021թ.-ի թիվ 04/04.2/297-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 2021 թվականի հունվարի 04-ին իրականացվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով «Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների» մատուցման գնման ընթացակարգ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: Գնման ընթացակարգին մասնակցել են երեք կազմակերպություն: ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթների համաձայն մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների, որին մասնակցել են երկու կազմակերպությունների ներկայացուցիչներ և ներկայացրել են նոր գնային առաջարկներ: Նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ԳՐԱՆՏ-ՍԻԳԱՐ» ՍՊ

ընկերությունը, որը 2021 թվականի հունվարի 21-ին ներկայացրել է գրություն, որով հրաժարվում է գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեզ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ձեռնարկել համապատասխան միջոցներ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1352-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2021/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.01.2021թ.-ին հայտարարվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն:

iii. «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն և «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ն ներկայացրել են 4 430 000 ՀՀ դրամի գնային առաջարկներ:

v. Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշել է մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

vi. Հանձնաժողովի 18.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ կազմակերպված բանակցությունների արդյունքում «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն առաջարկել է 900 000 ՀՀ դրամ գումար, իսկ «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ն՝ 1 140 000 ՀՀ դրամ գումար:

vii. «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն 21.01.2021թ.-ին գրությամբ, որը մուտք է եղել 25.01.2021թ.-ին, դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հրաժարվում է գնման ընթացակարգի իր շահեկան դիրքերից:

viii. Նույն արձանագրության 8.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով գնման ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով և հիմք ընդունելով «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1352-2021 գրությամբ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.01.2021թ.-ին հայտարարված «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն և «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ն ըստ Հանձնաժողովի 13.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության ներկայացրել են 4 430 000 ՀՀ դրամի գնային առաջարկներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 18.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ կազմակերպված բանակցությունների արդյունքում «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն առաջարկել է 900 000 ՀՀ դրամ գումար, իսկ «Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ն՝ 1 140 000 ՀՀ դրամ գումար: Սակայն «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն 21.01.2021թ.-ին գրությամբ, որը մուտք է եղել 25.01.2021թ.-ին, դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հրաժարվում են գնման ընթացակարգի իրենց շահեկան դիրքերից: Նույն արձանագրության 8.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով գնման ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով և հիմք ընդունելով «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/9» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1352-2021 գրությամբ «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/34 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գրանտ-Սիգար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**